ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ պրոռեկտոր

Ռ. Հ. Բաբխուդարյան

29. 11. 2024 թ.

# ԿԱՐԾԻՔ

## ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արմինե Արամայիսի Հարությունյանի «Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենը (Արարատյան հարթավայրի Ակնաշեն և Առատաշեն բնակավայրերի նյութերով)» Է 00. 03. «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի նոյեմբերի 26-ի նիստում քննարկվեց Արմինե Արամայիսի Հարությունյանի «Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենը (Արարատյան հարթավայրի Ակնաշեն և Առատաշեն բնակավայրերի նյութերով)» աշխատանքը պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Ավետիսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նահապետյանը, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Աբրահամյանը, պ. գ. թ. Գ. Շագոյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Գնունին, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը:

Ելույթ ունեցան Հ. Ավետիսյանը, Մ. Գաբրիելյանը և Ա. Գնունին: Նիստի մասնակիցները արձանագրում են հետևյալը.

Scanned with ACE Scanner

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածներից, նկարներից, աղյուսակներից, դիագրամներից:

Աշխատանքը աչքի է ընկնում ինքնատիպությամբ, քանի որ, հանդիսանալով պատմահնագիտական հետազոտություն, կրում է միջմասնագիտական բնույթ՝ լայնորեն օգտագործելով բնական գիտությունների տվյալները: Ընդսմին որպես սկզբնաղբյուրային հենք ծառայում են հեղինակի մասնակցությամբ իրականացված պեղումներից հայտնաբերված նյութերը:

Ներածությունում հեղինակը արժևորում է Առատաշեն-շումու թեփե շուլավերյան մշակույթը՝ վեր հանելով նրա տեղը Մերձավոր Արևելքի համաժամանակյա հնագիտական մշակույթների համատեքստում: Հեղինակին հաջողվել է ցույց տալ արտադրող տնտեսության զարգացման պայմաններում խեցեղենի գյուտի հսկայական նշանակությունը:

Ներկայացնելով խեցեղեն նյութի ուսումնասիրության համար բնական գիտությունների տվյալների օգտագործման կարևորությունը՝ հեղինակը նշում է այդ ուղղությամբ վերջին հետազոտությունները, իրավացորեն ընդգծելով աշխատանքի գիտական և գիտա-գործնական նշանակությունն արդի պայմաններում, ինչպես նաև թեմայի պրակտիկորեն մշակված չլինելը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ներկայացված հետազոտությունը, չնայած հիմնականում խարսխված է բնական գիտությունների տվյալների վերլուծության վրա, իր բնույթով պատմագիտական է, քանի որ նշված մեթոդները հիմք են ծառայում պատմական վերլուծությունների համար:

Հեղինակը շարադրում է աշխատանքի համառոտ բովանդակությունն ըստ գլուխների:

Առաջին գլուխը նվիրված է խեցեղենի ուսումնասիրության մեթոդներին: Առաջին ենթագլխում ներկայացված է հարցի պատմագրությունը: Էական հանգամանք է, որ հեղինակը չի սահմանափակվում զուտ հնագիտական աշխատությունների քննությամբ, այլ լայնորեն օգտագործում է ազգագրագետների հավաքագրած տվյալները ողջ աշխարհում: Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը նվիրված է խեցեղեն նյութի ակնադիտական ուսումնասիրության մեթոդներին և դրանց նշանակությանը: Երրորդ և չորրորդ ենթագլուխները նվիրված են խեցեղենի պետրոգրաֆիական և կավանյութի քիմիական վերլուծության մեթոդների նկարագրությանը: Հինգերորդ ենթագլուխն անդրադառնում է տեսական հարցերին. տիպաբանություն, դասակարգում հասկացություններին: Եզրափակելով առաջին գլխի վերլուծությունը՝ պետք է նշել, որ այն փաստորեն ինքնուրույն

Scanned with ACE Scanner

մի աշխատություն է, որը կարող է նաև օգտաշահ ձեռնարկ հանդիսանալ ուսանողների համար:

Երկրորդ գլխում ներկայացվում է ատենախոսության աղբյուրագիտական հենքը: Հատկանշական է, որ հուշարձանները ներկայացված են երկրաբանական և լանդշաֆտային համատեքստում: Գլխի առաջին ենթագլխում ներկայացված է Առատաշեն բնակավայրը. հետազոտությունների պատմությունը, շերտագրությունը, թվագրումը: Հեղինակն անդրադարձ է կատարում Ս. Սարդարյանի և Ս. Ասլանյանի հետազոտություններին: Մանրամասն նկարագրվում է բնակավայրի ճարտարապետությունը, ավանդույթների զարգացումը ուսումնասիրվող ժամանակաշրջանում: Հեղինակն անդրադառնում է նաև նյութական մշակույթի, մասնավորապես քարամշակման տեխնիկայի զարգացմանը և քարե գործիքների ներկայացվածությանը, ներկայացնում և տիպաբանում է ոսկրե գործիքները: Անդրադարձ է կատարվում նաև հնեաբուսաբանական և հնեակենդանաբանական զտածոներին: Անդրադառնալով հետազոտության բուն թեմային՝ խեցեղենին, հեղինակը օգտագործում է քանակական և տեսակային անալիզի մեթոդը: Համանման սկզբունքով երկրորդ ենթագլխում ներկայացված է Ակնաշենի բնակավայրը: Երրորդ ենթագլխում ներկայացված են տարածաշրջանի այլ հուշարձանները. Մասիս Բլուր, Ծաղկունք, Ադաբլուր:

Երրորդ գլուխը պարունակում է ուսումնասիրվող խեցեղենի տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը: Գլխի առաջին ենթագլխում ներկայացված են վերլուծությունների հիմնական մեթոդները. պետրոգրաֆիական, քիմիական, ռենգենոգրաֆիական: Աշխատանքի անկասկած շահեկան կողմերից կարելի է համարել հումքի և նրա հատկությունների քննությունը: Հատկանշական է, որ ներկայացնելով հումքի մշակումը և անոթների պատրաստումը, հեղինակը բնավ չի սահմանափակվում բնական գիտությունների մեթոդներով ստացված տվյալների շարադրմամբ, այլ լայնորեն ներգրավում է ազգագրական հետազոտությունների արդյունքները, այդ թվում նաև սեփական դաշտային դիտարկումները: Երրորդ ենթագլխում հեղինակը ներկայացնում է խեցեղենի ենթախմբերը ըստ առանձին բնութագրերի և պետրոգրաֆիական անալիզի տվյալների: Կարևոր հանգամանք է ներմուծված խեցեղենի տիպաբանությունը: Գլխի ավարտական հատվածը նվիրված է հումքի պոտենցիալ աղբյուրների քննությանը և դրանց հիմնական բնութագրերին:

Scanned with ACE Scanner

Կարևոր նշանակություն ունի աշխատանքի չորրորդ գլուխը, որտեղ ներկայացված է Ակնաշենից և Առատաշենից հայտնաբերված խեցեղենի ձևաբանական-տիպաբանական բնութագիրը և վիճակագրական անալիզը տարածաշրջանային համատեքստում: Հեղինակը լայնորեն ներգրավում է Անդրկովկասի, Մերձավոր Արևելքի հուշարձանների տվյալները:

Աշխատանքի արժեքավոր հատվածներից է հավելվածների բաժինը, որտեղ ներկայացվում են բարձրորակ լուսանկարները, համեմատական աղյուսակները, անալիզների տվյալները:

Այսքանով հանդերձ աշխատանքում առկա են մի շարք սրբագրական վրիպակներ, որոնք բնավ չեն ստվերում հեղինակի կատարած ահռելի աշխատանքը: Օրինակ՝ Առատաշենի կոլեկցիոն համարը ՎՊԱԹ-ում 32-ն է: Ադաբլուրը հետազոտել է նաև Ռ. Թորոսյանը 1971 թ.:

Նշված թերացումները չեն նսեմացնում հեղինակի կատարած աշխատանքը: Ներկայացված աշխատությունը կարող է լույս սփռել արտադրող տնտեսության վաղազույն փուլերի պատմության հետ կապված բազմաթիվ վիճահարույց հարցերին: Հեղինակին առաջին անգամ հաջողվել է վերակազմել հնագույն խեցեղենի պատրաստման ողջ տեխնոլոգիական շղթան, որը ներառում է հումքի հայթայթումը, մշակումը, խմորի ձևավորումը, անոթի պատրաստումը, չորացումը, թոնումը, հետագա մշակումը: Առաջին անգամ հեղինակն օգտագործում է պետրոգրաֆիական անալիզի մեթոդը մեծաքանակ նյութի վերլուծության համար: Այս մեթոդի օգնությամբ հնարավոր է որոշել արտադրության կազմակերպման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ: Սրանցից կարևորագույնը հումքի աղբյուրի խնդիրն է՝ տեղական կամ ներմուծված լինելը: Կարևոր են նաև միներալ և օրգանական հավելումներին, ինչպես նաև թրծման ջերմաստիճանին առնչվող հարցերը: Այսուհանդերձ աշխատանքն իր բնույթով պատմահնագիտական է, քանի որ նշված մեթոդները հեղինակը դիտարկում է պատմամշակութային համատեքստում: Գիտական շրջանառության մեջ է մտցվում մեծ քանակությամբ որակյալ շերտագրված և թվագրված հնագիտական նյութ, որը հուսալի հենք է կազմում հետագա վերակազմությունների համար: Միևնույն ժամանակ աշխատանքն ունի տեսական նշանակություն, քանի որ հեղինակի կողմից որդեգրված մեթոդաբանությունը կարող է արդյունավետ օգտագործվել նմանատիպ հետազոտություններ կատարելիս:

Ելնելով վերոգրյալից՝ Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն միջնորդում է 22 ԳԱԱ

Scanned with ACE Scanner

հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի հնագիտություն և ազգագրություն 007 մասնագիտական խորհրդին շնորհել ատենախոսության հեղինակին հայցվող գիտական կոչումը:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ,
պ.գ.դ., պրոֆ.՝ Հ. Գ. Ավետիսյան

Պ.գ. դ., պրոֆ. Հ. Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար՝ Մ. Վ. Հովհաննիսյան

29. 11. 2024 թ.

Scanned with ACE Scanner